


ՏՆՕՐԵՆ-ԽՍՐԱՍԳԻՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՍՐԱՍԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ՄԱՐԿԵՏ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԶԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկրագործի համար տեղի 30
, , վեցամսեայ 50
Յար երկրագործի համար տեղի 25
, , վեցամսեայ 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՔԻՉ ՄԸ ՉԻ ՓՈԽԵՆՔ

Երեք ամսուան միջոցին երեք կտակ ու-
նեցաւ Եգիպտոսի առաջնորդարանը, թէ եւ
տակաւին . . . թուղթի վրայ: Անշուշտ իրա-
կանութիւն պիտի դառնան անոնք, ուշ կամ
կանուխ կտակներու անգործադրութեան յա-
ւիտենական խնդիրը չէ զոր պիտի յուզենք
այսօր, մանաւանդ որ այս վերջի երեքին օ-
րինաւորութիւնը ու կտակարարներուն խղճա-
հարութիւնը կասկածի տակ ձգելու պատ-
ճառ մը չունինք առ այժմ:

Դիտած էք, սակայն, որ նախնական ժա-
մանակներէ ի վեր, այստեղ եղած կտակներ
ամենքն ալ նոյն միօրինակութիւնը կը պահեն
իրենց նպատակին մէջ: Գալոյց, եկեղեցի, ու
պղտիկ բաժին մըն ալ աղքատաց: Այն թուա-
կաններուն ուր հայ գաղութը հաստատուն
կազմակերպութիւն մը չունէր տակաւին ո՛չ
ալ բաւականապէս եկամուտ իր հոգեւոր ու
կրթական պէտքերուն համար, այդ հոգաժու-
թիւնը ու հեռատեսութիւնը անհրաժեշտ էին,
և մարդու միտքէ չանցնիր բնաւ թէ Վանեցի
Կարապետ ազգին թողած իր հարստութիւնը
գալոյցէ տարբեր նպատակի մը պէտք էր յառ-
կացունէր կամ Պողոս պէյ նախապատուութիւն
չի տար եկեղեցիի կառուցման: Անկից
ի վեր Գահիրէի ու Ալեքսանդրիոյ գաղութներն
ալ զարգացան, եկեղեցիներն ալ շէնցան. հա-
յերուն թիւը զգալապէս բազմապատկուած է
Նեղոսի ափերուն վրայ, և նպատակ, նուիրա-
տութեան գումարները աւելցած նոյն հա-
մեմատութեամբ, հիմակ, եկամուտի աղբիւր-
ներն այնպէս կանոնաւորուած են, որ ժողովի
մը, հոգաբարձութեան մը գլուխ կամ . . . թեւ
եղովը պէտք չունի մտածելու թէ «Ժախքերն
ինչպէս պիտի հոգացուին», այլ պարտաւոր է
միայն, ան ալ եթէ ուզէ, արդիւնաւոր մա-
տակարարութիւն մը ընելու միջոցները խոր-
հիւ: Եւ ճիշդ ասոր համար ըլլալու է որ «Ժու-
ղովականները» ո՛չ թէ նազ չեն ընել պաշ-
տօն ստանձնելու, ինչպէս ուրիշ տեղեր, այլ
ստանձնելէն ետքն ալ կը մտնան սահմա-
նադրական շրջաններու բոլորիւր: Եթէ չըլլա-
յին օրհնեալ արմաւենիները, բարեբեր ապա-
սիցիները, և հաստութարեր կոկիկ կալուած-
ները, ամենքն ալ բարեյիշատակ մեռելներու
չնորհիւ, պիտի տեսնէիք թէ մեր «Թաղական
աղանջները ինչ չուտ պիտի ձանձրանային «ի-

րենց ազգասիրական պարտականութիւնը»,
կատարելէ, — քիչ մըն ալ ուրիշները թող յոգ-
նին, էֆէնտիմ — ըսելով: Առանց հասցիւթ վրն-
տուելու՝ ծախքերը կարենալ վճարելուն մէջ
անանկ հեշտութիւն մը, հանգստաւետութիւն
մը կայ, ինչպէս անհատական նոյնպէս հան-
րային կեանքի մէջ, որ պանքայի մը անօրէնք
կամ վաճառատան մը վարիչն իսկ չունենար,
այս պայմաններու մէջ, Առաջնորդարանի ա-
թոններուն ձգողական զօրութիւնը դիւրաւ
կըմբռնուի:

* * *

Բայց մենք կտակներու վրայ պիտի խօ-
սէինք:
Քիչ չառ կարողութեան տէր ամեն հայ
որ իր մահէն վերջ բարի յիշատակ մը թո-
ղուլ-կողէլէլ այստեղ, նոյն սեւեռեալ գաղա-
փարը կունենայ. գալոյց — եկեղեցի, եկեղե-
ցի — գալոյց. ուսեալը, անուոր, բնիկ հա-
րուստը կամ գաղթական հարուստը, զարգա-
ցած մարի տէրը կամ ուսմիկը, շերմեռանդ-
հայը կամ արաբախօս հայը, ամենքն ալ այս
չրջանակին մէջ կըմբռնեն բարեբարարութիւ-
նը: Զէ՞ք կարծէր որ ժամանակը եկած ըլ-
լայ այլ եւս նոր ձեւեր, նոր նպատակներ մը-
տածելու, միշտ ազգին օգտակար: Ռուսա-
հայերը, որոնց հետ ո՛չ մէկ երկրի հայու-
թիւն կրնայ միցիլ կտակի կողմէ, և որոնց
«յետ մահուան» առատաձեռնութիւնը օրի-
նակ կը բերենք, դեռահատելի պէսպիսու-
թիւններ ներմուծած են իրենց կտակելու ե-
ղանակին մէջ: Ինչո՞ւ Եգիպտոսի հայերն ալ
չի թօթուեն իրենց հնադարեան միօրինակու-
թիւնը. արտասովոր խելքի մը պէտք չի կայ՝
գծուած կամ մաշած շրջանակէն հեռանալու
համար: Մարդ մը որ 1000 ոսկի կը թողու-
անոր եկամուտով 100 միւս աւելի վաւել տա-
լու համար եկեղեցիին մէջ կամ պիւտճէի
վէճերն աւելի սաստկացունել տալու հա-
մար գալոյցին շուրջը, լաւագոյն չը՞նել
փափագ յայտնելով որ որոշեալ թուով ազ-
քատ տղաքներ Եւրոպա խրկուին մասնագի-
տութիւն մը կամ արհեստ մը սորվելու. եկե-
ղեցին բաւականաչափ միւս ունի արդէն իրեն
ու գալոյցը բաւականաչափ . . . կռիւ: Ուրիշ
մը կրնայ խորհիլ, օրինակի համար, թէ լա-
ւագոյն կրնեմ իմ թողած համեստ գումա-
րովս երկու — երեք անկողին ունենալ տեղա-
կան լաւագոյն հիւանդանոցի մը մէջ, հայ
պանդուխտ հիւանդներու յատուկ, որոնք

տէր տիրական, խնամող չունին. այդ դըժ-
բազմներուն օրհնէիքը նուա՞ղ սրտեռանդն
պիտի ըլլայ քան սնտուսի մը կամ ժամկոչի
մը որոնց ամասկանք պիտի աւելնար այդ կը-
տակին շնորհիւ: Գրական միջոցներով հա-
ստատման գաղափարը ներշնչել կանխահաս է.
Եգիպտահայերը զարգացման այդ կէտին
հասնելու համար՝ Գասթ-Է-Նիլի կամուրջին
տակէն դեռ չա՛ն ջուր պէտք է հոսի: Բայց
կտակի յարմար և ուրիշ միջավայրերու մէջ
ընդունուած օգտակար նպատակներ չեն պակ-
սիր: Մղում տանք այս գաղափարին: Առա-
ջին պարտականութիւնը հողեւորականու-
թեանն է որ երբ հարուստ հիւանդի մը սը-
նարին քով կերթայ, ըսէ անոր «Օրհնած,
լաւ կրնես եթէ անորոշ կերպով դպրոցին
գումար մը ձգելու տեղ՝ դպրոցին յատուկ
ապագայ վարժաւետ ու վարժուհի պատրաս-
տելու յատկացունես կտակդ. համալսարան
մը կերթան, կը սորվին ու կ'ուզան»: Կամ
թէ «Հայաստանի մէջ հազարաւոր որբեր կան,
գիտե՛ս, հաճի աղա, անոնցմէ քանի մը հա-
տը հոս բերել տանք ու խնամենք»:

Գաղափար մը թելադրելուն ու անոր պոր-
ծադրութեան միջեւ անշրպէսը երկար կըլլայ
երբեմն, գիտենք. մենք պարտականութիւն
կը սեպենք մեզի առաջին անգամ ըլլա-
լով այս գաղափարը տալ մեր ընթերցողնե-
րուն, Եգիպտոսի ամբողջ հայութեան. Ժամա-
նակը ու հասուն խորհրդածութիւնը կըր-
նան իրականութիւն տալ անոր: Սովորա-
կան կտակարարէ մը աւելի յիշատակու-
թեան արժանի պիտի ըլլայ այն հայը որ կը-
տակ մը ընելու առթիւ՝ փորձէ այս ոչ նուազ
ազգօգուտ նորութիւններէն մէկը. և ապա-
հովապէս, իր հետեւողները պիտի ունենայ
ապագային մէջ:

Ա Ր Չ Ա Պ Ա Ն Գ

ՍՈՒՏ Է ԵՂԵՐ

Էջմիածնայ Գանձարանէն 200,000 բուլլի գող-
ցուած ըլլալու լուրը, որուն ստուգութեանը վրայ կը
կը տարակուսէինք արդէն, բողբոլին անհիմն ելաւ.
Երբեք ազգարար Սինօղի անդամ Տ. Սարգիս արքե-
պիսկոպոս Տէր-Գառնարեան, Տ. Արիստակէս եպիս-
կոպոս Գաթիկան և Տ. Աշոտ վարդապետ Շախ-
եան պաշտօնական հետաքրքր մը ուղղելով ի Կ. Պո-
լիս, Օրմանկան Պատրիարքին, կը հերքեն այդ գրոյ-
ցը որ ծագում ունի էր Գաթիկէն: Բիւզանդիոն
օրաթերթին ուղղութեամբ թղթակցութիւնէ մը Պատ-
րիարքարանը լրագրաց հաղորդած է, այն հետագ-
րական հերքումը:

Այս առթիւ, կրնանք աւելցունել նաեւ, թիֆլիզէ գրուած նամակի մը նայելով, թէ էջմիածնայ Գանձարանին սրահետի գումարը ո՛չ միայն պակասած չէ, այլ վերջին մէկ տարուան մէջ 50,000 բոսպիլի յաւելում մըն ալ ունեցած է նոր կտակներով:

SUSSENERI ZRUPAFUAGNER

Յարութիւն փաշա Տատեան նամակ մը ուղղելով Պատրիարքին խնայուցած էր թէ կը հրաժարի Գաղարախան Ժողովի ատենապետութենէն ու անդամակցութենէն միանգամայն: Իբրեւ շարժառիթ իր հեռացումն՝ Ազգ. Վարչութեան զլրիւն, թէեւ «անձնական տկարութիւն» ցոյց տուած էր, բայց տարակոյս չի կար որ այս գիւտնադիտական բռնածեղը կը սքողէր հզոր պատճառներ: Արթին փաշա կա՛մ համամիտ գտնուած ըլլալու չէ ժողովականներէ ուսանց ընթացքին և կա՛մ վշտացած ըլլալու է այն անվերջ ձգձգումներէն որոնք տեղի կունենան Պատրիարքարանի խնդրանքներուն ընդունելութեան մասին: Օրմանեան Պատրիարքն աւել ձապ Տատեանի բնակարանը երթալով, ի դիմաց Քաղ. Ժողովին խնդրեր է որ չի պնդէ իր սոյն ուրոյնան վրայ:

Գործն այս վիճակին մէջ էր, երբ պարտէն հասած գրաբարադոյն հրամանի մը համեմատ՝ Արթին փաշա ետ առեր է իր հրաժարականը և անց եւալ ուրբաթ անձամբ ատենապետեր է Քաղ. Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ ՌՈՒՍԻԱ

Կ. Պոլսէն առնուած վերջին լուրերու համեմատ — կրնան եւրոպական լրագիրք — քիւրտերը աւարառութիւններ գործեր են ուսական սահմանագիծին վրայ գտնուած հայ յաբնակ գիւղերուն մէջ. այս յարձակումներուն հետեւանք, որոնց զէնքով պատուիրաներ են հայերը, Փոքր Ասիան կատարելով անխնայութեան մատնուած է, կաւերցնեն:

Ռուսական դեսպան Պ. Զինովիէֆ այս դէպքերուն առթիւ գանգատելով Սուլթանին, աւելցուցեր է որ եթէ Ռուսիա ինք չի հաստատէ բարեկարգութիւնը, ռուս կառավարութիւնը պիտի հարկադրուի զինուորական ազդու միջոցներ ձեռք առնել վերջ մը գնելու համար այն խռովութիւններուն որոնք տեղի կունենան Ռուսիոյ ու Կովկասեան նահանգներու սահմանագիծին երկայնութեամբ:

Կը կարծուի սակայն թէ Ռուսիոյ այս ձեռնարկին նպատակն ուրիշ բան չէ բայց եթէ զօրաւոր ճնշում մը բանեցունել Դրան վրայ, զայն հարկադրելու համար որ ուրիշ խնդիրներու մէջ Ռուսիոյ տեսութեանց համակերպի:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿՐԱՆՔ

«Լ'Աւանտի»-ի փետրուարի թիւը մեզ կը ծանօթացնէ իսպառնէն երկհասոր հրահարակորսեան մը, Հայաստանի ու Կիլիկիոյ նուիրում(1): Հեղինակը, որուն քաղմական մանրանքներն կը կարծուի թէ Հայէպի իսպառնէն նախկին հիւպատոս Պ. Է. Վիքոն եղած ըլլայ, «Աւաթոյի Լաքիւ» ծածկանունով ստորագրած է իր երկասիրութիւնը ուր խորին հմտութիւն, նկատարութիւն ու համարձակութիւն կը ցոյց տան:

(1) «Gli Armeni e Zeitoun», տպագրուած ի Ֆիորենցիա:

րազեղ ոճ եւ համակիր զգացումներու արտայայտում միացած են: Առաջին հասորը կը պարունակէ Հայաստանի ու Կիլիկիոյ քաղաքներ, ու քաղաքներ է քաղաքներ գոյններու, ուսումնասիրութիւններ Հայաստանի հին ու նոր պատմութեան, աշխարհագրութեան, կրօնի, աւանդութիւններուն, ցեղաբանութեան եւայլն: Հայաստանի իսպառնէն կը յիշէ Պեղիկի դաշնագրին Յուդայոյ, Սասունի կոստանք ու անոր յաջորդող դէպքերը, եւրոպական տնտեսական կարգի մը քննարկում ու վերջին ջարդերը: Համակրանք կարծաւոր է հայ հրապարակաւորներուն եւ հայաստան օտարներուն նկատմամբ որոնք իրենց գրիչը օգտակարացնելու համար են ազգին: Յոյց արդար համար թէ վարչական կարողութիւնը ու դիւանագիտական քաղաքական միջոցներ ի՞նչ կարողութիւններ կրնան հասնիլ հայերուն մէջ, օրինակ կը բերէ Եգիպտոսի հայ երեւելիները, սկսեալ Պողոս պէյ Եռուսեմեանէ, եւ մասնաւորապէս կը ծանրանայ Նուպար փաշայի վրայ որուն արած ջանքերը Եգիպտոսի քաղաքական կարողութեան համար՝ սխալաբանութիւն կը յիշէ: Եւ հոն կը յանգի որ, եթէ ինքնօրինակութիւն տրուի Հայաստանի, զայն վարելու կարող հայեր չեն պակսիր:

Երկրորդ հասորը ամբողջովին նուիրուած է Զեյթունի, անոր քաղաքի հայերուն, ու ժամանակակից դէպքերու որոնք դիւանագիտական ճշմարիտ էջեր կը պարունակեն: Հոն իրենց արժանաւոր յիշատակութիւններն Աղասիի, Ապահի, Հրաշեայի եւ Մշեհի անուններն ու անոնց անձնակերպութիւնները: Ուշիակալ երգերու իսպառնէն գեղեցիկ քաղաքանութիւն մը կը նշուի եւ հասորին:

«Աւաթոյի Լաքիւ»-ի այս ընթերցանութիւնը ցոյցաւոր է իր եւ իր ազգին վեհանձն ու կարեկից զգացումներուն տառապող հայութեան համար:

ԹՈՒՐԻՍԹԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա.

ԴԵՆԱՏԻ ԱՄԵՐԻԿՈՆԻՆ

Պիճակի մէջ, կարծաւոր վիզ, նրբապէս հասակ, շուշանակաթոյր ծոծրակ՝ ոսկեթել մազերու շուքին տակ, մորթ մը թաւիչէ, կաթիլ և երկէ չինուած, ձեռքեր փղոսկրէ և մոմէ թափուած, աչքեր որոնց մէջ երկնքի և լճակի ցոլացումներ կան, առատ մաշկը արեւին ճառագայթներովը ներկուած, շրթներ որոնց գոյնը ձաթած նուրբ մը ձեւերէն դուրս կը ցոյց տայ, ակունքներ նոր դաշնակի մը տեսողութիւն պէս ձեւակ, փայլուն, կանոնաւոր, ահա ինչ ո՛վ կողմուած է ամերիկոսին որ Եգիպտոս կողմէ, էջ նստելու, բարձրը տեսնելու, գեղեցիկների մէջ բիքէ շրջագրեալ հազնելու և պարաները մօտէն ծանշալու համար:

Երբ փողոցին մէջ քաղելու կելէ, կարծես աշակերտ մըն է որ դպրոցէն կը փախչի կոր:

Թեւին տակ Boedeker մը, ձեռքը բարակ գաւառան մը, կարծրին վրայ մանուշակի խոշոր փունջ մը և գլխուն վրայ գլխարկ մը որ ոչ ձեւ ունի, ոչ գոյն և ոչ ալ շնորհք:

Մանջու շարժումներէն, պէտքերի նայուածքներ, և հրեշտակի ժպիտներ ունին այդ ամերիկոսները: Վարդապէս մեծ արձաններ՝ որոնց փորին մէջ լարւող մեքենայ մը կայ կարծես որ կեանք կուտայ ու նոր և շարժում:

Օթէլին դրան առջեւ երկայն աթոռի մը վրայ կը փռուի ու կերակուի:

Իշտարաններու հետ լարեկամութիւն ընել իրեն էն մեծ հաճոյքն է: Երկի մարդու երես չի նայիր, սովորական կիներու պէս. բայց երբ անգամ մըն ալ վրայ կը դնէ նայիլ, c'est pour tout de bon:

Միլիոններ ունի և քիչ մը խոշոր ոտքեր:

Չարմանայի է, ամերիկոսները ոչ փոր ունին և ոչ ալ . . . : Ասոր համար է որ տեղ մը չեն կըրնար նստիլ ոսկորներն կը ցուրի:

ՌԱՏԱՄԷՍ

(Եստուական ընթերցանութիւն . . . Don Juanի մէջ):

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հեռագրեն թանկին թէ Սուլթանին խորհրդական Իզզէթ պէյի երկրորդ որդին Սալիմ պէյ որ Բարիդի հանքային ու երկրաշափական վարժարանին աշակերտած է, առանց արտօնութեան Փրանսա վերագործէր է՝ հոն իր առաջադէպ շարունակելու համար: Կրտսն սակայն թէ իր մեկնումը փախուստ մըն է պարզապէս, վա՛ն զի ամբաստանուած է եղեր թէ ժեմ-Թիւրքի կուսակցութեան կը պատկանի: Իզզէթ պէյի հակառակորդները, մասնաւորապէս չէյի Ապտիլ Հիւտա, առիթէն օգուտ քաղել են զինքը անդամ մըն ալ աչքէ ձգել տալու համար, այնպէս որ Իզզէթ պէյ այլ եւս պաշտ չերթար եղեր:

—Վիեննայէն թալանգի ուղղուած թղթ-թակցութիւն մը սա կարծիքը կը յայտնէ թէ եւրոպական համաձայնութիւնը պիտի լուծուի այն պարագային ուր Ռուսիա ետ չի կենայ Եօրկիս իշխանը Կիւտեի կառավարիչ անուանել տալու առաջարկէն: Գերմանիա ու Աւստրիա պիտի ըլլան բաժնուորները: Միւս կողմէ, Լոնտոնէ կը հեռագրեն թէ Անգլիա և Ռուսիա կատարելապէս համաձայնած են Եօրկիս իշխանին ընտրելութեան վրայ:

—Դուռը շատ հաշտարար ոճով մը պատասխաներ է Պալկարիոյ ծանուցագրին որով այս վերջինը կը բողբէր Մակեդոնիոյ մէջ ի դրո՛ւ գրուած խժգոթութիւններուն դէմ:

—Աթէնքէ կը հեռագրեն թէ արիւնահեղ կռիւներ տեղի կունենան ի Թեսալիա, զինուորներուն և զիւղացիներուն միջեւ: Նախորդ շարժումն ալ հեռագրերը հաղորդեց թէ ընդհարում մը պատահեր է ի Լաճոնիսա (Թրակիոյ մօտ), սուրբերու պահանջման առթիւ: Աւստիկ ազոր մանրամասնութիւնները, յունական աղբիւրէ հասած: Օսմ. բանակի հրամանատարներէն Սէյֆուլլահ փաշա զինուորներով և թնդանօթներով այդ կողմի գիւղերը գացեր է հարկադրելու համար ժողովուրդը որ տուրքերնին վճարեն: Գիւղացիները հրացանի հարուածներով պատասխանել են, ուսկից պզտիկ ճակատամարտ մը առաջ եկեր է, յաջորդ օրն ալ վերսկսելով: Վախճանը յայտնի չէ:

—Իտալացի ծովակալ Քանէվարօ Սարսենիա մարտանաւով փետրվար 6ին Հանեա-յէն Իզմիր ուղեւորեր է ուր պիտի մնայ տասն օրի չափ:

—Փրանսայի երեսփ. ժողովին մէջ, պիւտեի վիճարանութեան առթիւ, Պ. Տըլօնը պահանջեց որ անգլիացիները ելլեն Եգիպտոսէն ու Նեղոսի հովիտը չեզոքացուի: Պ. Հանթօ պատասխանեց թէ Փրանսա կը շարունակէ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

1897 նոյեմբերի սկիզբը, Գահիրէի գաղ-
թականաց յանձնաժողովը լուծուելով՝ այդ
պաշտօնը յանձնուեցաւ Աղքատաց Հոգաբար-
ձութեան որ իր անդամներու թուոյն վրայ ե-
րեք հոգի եւս աւելցուց ու ստանձնեց գաղ-
թականաց խնամքը :

Այդ թուականին, Գաղաքական Ժողովը
որոշեց որ ամենէն աւելի կարօտ և աշխատե-
լու անկարող գաղթականները, կիները ու
սպաքները խնամուին և պարզ սնունդ մը
տրուի անոնց մինչեւ 1898 յունիս 1 :

Արդ, կիմանանք թէ այդ պարէնի բաշ-
խումը յանկարծական կերպով դադարեցուցե-
ր են այս օրերս, թէեւ գեւ չորս ամիս կայ
յունիսին :

Կը փափագէինք որ հրապարակու բա-
ցատրութիւն մը տրուէր Առաջնորդարանի կող-
մէ, թէ ի՞նչ պատճառ կար նախապէս տըր-
ուած մարդատրական որոշումը ետ առնելու,
մանաւանդ որ ամառական նպատակ գումարներ
յատկացուած են քանի մը կարող ազգային-
ներէ :

Արդէն, տրուած անունը մեծ լսան մը չէր,
հաց, ձիթապատուղ կամ պանիր :

Աղքատանդրիայէն մեզ կը գրեն .

Անցեալ չորհրդարթի օր քաղաքի մէջ վախ-
ճանեցաւ Պոլսոյ ծանօթ փառապաններէն Կեսա-
րացի Յարութիւն Էֆ. Մարտոսեան :

Յուշարկուրութիւնը կոտորուեցաւ հետեւեալ
օրը՝ հինգշաբթի, նախապէս թեմաք Առաջն. Տեղա-
պահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտի որ յատկապէս Գա-
հիրէն հրաւիրուած էր և ի ներկայութեան յու-
ղարկուորաց խումն րոպով լեռն :

Վառնայի հայերը նոր թերթ մը ետ պիտի ու-
նենան :

Մեզ գրուած յայտարարութենէ մը կը տեղե-
կանանք թէ Պ. Պ. Գամբեր-Արշալիր և Եւաքար (Ե.)
որոնք մինչեւ ցարդ Իսթանպուլին կաշխատակցէին,
ձեռնարկած են Եւաքար անուն կիսաշարթիւներ
թի մը հրատարակման «Այս ձեռնարկ նպատակ ու-
նի, կ'ըսէ յայտարարը, օգտակար ըլլալ պատահա-
մանի հայութեան և մասնաւորապէս Պալկարիոյ ու
Բուսանիոյ հայ գաղութներուն որոնց համար բազ-
մակողմանի ու անաչառ թերթի մը պէտքն այնքան
զգալի եղած է» : Եւաքարին նիւթերը պիտի ըլլան
ազգային, զրակոն, բողբոջակոն : Բաժնեդիրն է
Պալկարիոյ համար 10, իսկ արտասահմանի համար
12 Փրոմք տարին :

Յաջողութիւն կը մտկենք այս լրագրական
նոր ձեռնարկին :

ԵՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այլի Տիկին Ա. Յ. Մուրատեան և իր զա-
ւակները խորին շնորհակալութիւն կը յայտ-
նեն ամեն անոնց որ հաճեցան ներկայ գտ-
նուիլ իրենց սղապեալ ամուսնոյն և հօր ՅԱ-
ԿՈՐ ԷՖ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ յուղարկաւորութեան
տխուր հանգէտին և իրենց ցաւակցական ըզ-
գացմանց հաւաստին տալին այս տխուր առթիւ :

Աղքատանդրիա, 5 փետր. 1898

ՏԵՂԱԿԱՆ

Լորա և Լէյտի Դրամը, երէկ գէպի
Վերին Եգիպտոս ուղեւորեցան, զբօսական
պաղոյս մը կատարելու համար :

—Արապքին գործոց նախարարը, նախա-

րարաց խորհրդոյ որոշմամբ, շաբթուս մէջ չըր-
շաբերական մը պիտի ուղղէ մեծ Տէրութիւն-
ներուն՝ ի մասին Եգիպտոսի խառն դատա-
րանաց պայմանաւորութիւն երկարաձգման : Այս
երկարաձգումներ տեղի ունեցած են 1884էն
ի վեր հինգ անգամ : Հիմակուան հնգամեայ
չըլանը կաւարտի 1899 յունուար 31ին :

—Յունաստանի և եգիպտական կառա-
վարութեան միջեւ դիւանագիտական յարա-
բերութիւնները երէկուրէն վերսկսան :

—Պ. Ալտէրսըն՝ խտրական շոգենաւ-
ները այդքան բաղդաւոր կերպով ձեռք ան-
ցուցնելու գոհունակութենէն մղուած՝ 1000 ոս-
կի նուիրած է Աղքատանդրիոյ քարափին վրայ
հաստատուած նաւաղներու ապաստարանը
մեծցնելու համար :

—Սաքս Բօպուրի գուրը Կիլիկի բուրգե-
րը այցելեց շաբաթ օր :

—Պ. Վանտէրպիլտ, մեծահարուստ ամե-
րիկացին, որ քանի մը օրէ ի վեր Գահիրէ կը
գտնուէր, Գուքի մասնաւոր շոգենաւով մը
գէպի Վերին Եգիպտոս կողեւորի այսօր :

—Ծաղկախոր օրէ օր կը սաստկանայ
Աղքատանդրիոյ մէջ : Եւրոպացի շատ ծանօթ
անձնաւորութիւններ այդ հիւանդութենէ բըռ-
նուած են : Թաղապետութիւնը կը հրաւիրէ
քաղաքին բնակիչները պատուաստուելու : Աղ-
քատները ձրիապէս պիտի պատուաստուին :

—Եգիպտական երկաթուղիներու Գահի-
րէի կայարանին մէջ յատուկ սրահ մը յատ-
կացուած է ուր ճամբորդները Եւրոպայէն
հետեւին բերած գոյքերնին պիտի գտնեն.
այսպէսով այլեւս պէտք չպիտի ըլլայ Աղքատան-
դրիոյ մաքսատան մէջ ժամաւաճառ ըլլալու :

—Վերջացող շաբթուան մէջ ժամտախտէ
1069 հոգի մեռած են ի Պոլսէյ :

—Շաբաթ գիշեր հրդեհ ծագեցաւ Գա-
հիրէի երկաթուղոյ կայարանին մօտ, Սըր-
թիէ փողոցը : Հեռագրական վարչութեան
միջերանոցն ու քանի մը տնակներ այրեցան :
Առաջինին վնասը 1300 ոսկի է :

—Խտիվին արարողապետ Ալի պէյ Եա-
հին հրաժարական տուած է :

—Մուսրիի պատճական տառնի բան-
տէն չորս հոգի փախան առջի օրը : Աստիցմէ
մէկը ձերբակալուած է. միւսները կը փրն-
տըռուին ոստիկանութեան կողմէ :

—Երէկ իրիկուն հարիւր քսան գերմա-
նացի թուախներ հասան Գահիրէ :

—Գահիրէի Վէկէ-Էլ-Պիլքա թաղին մէջ
բնակող Եւրոպացի կնոջ մը 40 ոսկին ու 40
հազար Փրի արծէթութեան գոյցուած են,
բացակայութեանը միջոցին :

Վ. Բ. Պ. Ա. Կ. — Շաբաթ օրուան Փարոսի մէջ, վեր-
ջին վայրկեանի զրուած հետազոտող տաղաբան սը-
խոյ մը կը պարունակէր. փոխանակ ըսուելու «հար-
կատու կըլլայ Սուլթանին» տպուած էր լիւթանին :

Ի Զ Մ Ի Ր Ի Ո Ճ Ի Ր Ը

Աւասիկ Եսայի էֆ. Եսայեանի սպանման
պարագաներուն վրայ հասած նորագոյն տե-
ղեկութիւնները :

Եսայեան էֆ. Սարդինի Դիւլպէ գառ-
նալով իր տունը կերթալ՝ երբ անձանթ մարդ
մը հինգ տեղէ վիրաւորեց զայն ու արիւն-

նակէ պաշտպանել Թուրքիոյ և միւս տէրու-
թեանց իրաւունքները Եգիպտոսի մէջ :

Այս միջոցին Պրանսան զբաղեցնող հրա-
տապ խնդիրներուն մէջտեղ, քիչ մը անհար-
կի նկատուեցաւ Պ. Տըլօնքի պահանջումը,
որուն մէջէն ելլելու միջոցը գտաւ արտաքին
գործոց նախարարը՝ դիւանագիտական պա-
տասխանով մը :

* * *

ԱՆԳԼԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Անգլիոյ Խորհրդարանը բացուեցաւ ե-
րէկ : Գահաճառը կը սկսի աւանդական պար-
բերութիւնովը «Մեծն Բրիտանիոյ յարաբե-
րութիւնները» տեսութեանց հետ՝ կը շարու-
նակեն բարեկամական մնալ : Ժառին սկիզբը
հակիրճ յիշատակութիւն մը կայ ի մասին
Կրէտէի. «այն խաղաղութեանը, կը յայտարարէ
Թագուհին, որոնք արդեւ կըլլան միահա-
ղոյն կարգադրութեան մը ի մասին Կրէտէի,
պիտի հարթուին ի մօտոյ՝ Եօրկիոյ իշխանին
Կրէտէի կառավարիչ անուանուելովը» : Ժառին
մեծագոյն մասը նուիրուած է Հնդկաստանի
դէպքերուն : Զինու. գործերու մասին ո՛ր և է
ակնարկութիւն չիկայ :

* * *

ԶՕԼԱԻ ԳԱՏԸ

Պրանսական կառավարութեան կողմէ,
խորհրդարանի որոշմամբ, Զօլաի գէմ բացուած
գատը սկսաւ տեսնուիլ այս երկուշաբթի օր :
Ոչ միայն Պրանսայի մէջ, այլեւ Եւրոպայի ա-
մեն կողմը, նմանը քիչ անգամ տեսնուած
ընդհանուր հետաքրքրութիւն կազդէ այս գատ
որուն շարժառիթն է, ինչպէս կը յիշուի, մե-
ծանուն վիպասանին Օռօռ յրազրի մէջ հրա-
տարակած Բաց նամակը՝ հանրապետութեան
նախագահին ուղղուած, ուր Տրէֆիւսի դատին
արդար ու անկողմնակալ վերաբնութիւնը կը
պահանջէր և բանակին զինուոր զօրավարները
կամբաստանէր :

Աւասիկ այդ գատին վերաբերմամբ Բա-
րիդէ յաջորդաւոր հասած հեռագիրները :

Երկուշաբթի 7 փետրուար. — Զօլաի գա-
տը լսելու համար ստուար բազմութիւն հա-
մախմուած է : Բուռն սգեւորութիւն կը տի-
րէ : Ամբաստանեալին կողմէ իրեն ի պաշա-
պանութիւն հրաւիրուած վիաններէն շատը բա-
ցակայ ըլլալուն, Զօլաի փաստարանը Պ. Լա-
պօտի պահանջեց որ պաշտօնապէս կոչնագիր
խրկուի անոնց և կամ գատը յետաձգուի :
Գատարանը որոշեց վաղը վճիռ տալ այս ա-
ռաջարկի մասին, և տեսնել վերջաւ առանց
որեւէ միջադէպի :

Երեքշաբթի, 8 փետրուար. — Եղեռնադատ
ատենանին շրջականները անսովոր ոգեւորու-
թիւն մը կը տիրէ : Ամենատուար բազմու-
թիւն :

Գատարանը կը հրամայէ որ Զօլայի կող-
մէ նշանակուած բոլոր վիանները ներկայանան
Եսայի, կը լսէ վկայութիւնը Հանրապետու-
թեան նախկին նախագահ Պ. Բադիմիլ Բէ-
ռիէի որ կը յայտարարէ թէ «բան մը չի գի-
տեր» : Նոյնպէս կը լսէ ծերակոյտի նախորդ
գեր-նախագահ Պ. Շէրէ Բէթմէնն որ նորէն
կը պնդէ Տրէֆիւսի անմեղութեանը վրայ :

Գատարանէն դուրս ելլելու պահուն, Է-
միլ Զօլա անարգուեցաւ ու հրմշակուեցաւ
ամբոխին կողմէ :

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՏ	ԵՐԵԿԱՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՒՈՏ	ԵՐԵԿԱՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւեզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնչա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53				
Զակաղիկ)	ժամ.	1 34	8 54	Խամաղլիա	»	կրեկոյ 1 20	7 5
	մեկ.	1 44	9 4				
Խամաղլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	Զակաղիկ)	ժամ. մեկ.	3 7	8 53
		—	5 —			3 17	9 3
Սիւեզ կայարան	ժամ.	—	5 —	Պէնչա)	ժամ. մեկ.	4 13	9 47
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—			4 17	9 4
				Գահիրէ	ժամ.	5 5	10 35